

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

26.03.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերդյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխտյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ձեկ.Ն.Սարգսյան/
2. «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կայանալիք 4-րդ համապետական շաբաթօրյակի միջոցառումների մասին
/Ձեկ. Հ.Թադևոսյան /
3. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/մարզպետի տեղակալներ/
4. Լոռու մարզի և մարզի որոշ համայնքների օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության մասին
/Ձեկ. Լ.Ասլանյան /
5. «Լոռի-Մարտակերտ» համագործակցության ծրագրի շրջանակներում Մարտակերտ կատարված այցի մասին
/Ձեկ. Վ.Խաչատրյան/
6. Վանաձորի պետական համալսարանում «Հատուկ մանկավարժություն» մասնագիտության ներդրման մասին
/Ձեկ. Մ.Սայադյան/
7. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ձեկ. Հ.Պապոյան/

8. Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի թափուր պաշտոնի համար կայացված մրցույթի մասին
/Ձեկ. Ձեկ. Ա.Աղլոյան/

9. Մարզի համայնքներին պարարտանյութերի և սերմացուների բաշխման գործընթացի մասին:
/Ձեկ. Ձեկ. Գ.Հակոբյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց .

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքների, մարզպետարանի ենթակայության հիմնարկների և այլ կազմակերպությունների կողմից «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կայանալիք 4-րդ համապետական շաբաթօրյակի պատշաճ կազմակերպման և անցկացման նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանին՝

Լոռու մարզպետարանի և համայնքների կողմից օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության ամրապնդման նպատակով, աշխատանքային խորհրդակցության ընթացքում ներկայացնել համապատասխան առաջարկություններ և ամփոփ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանին, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ.Խաչատրյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և ներկայացնել համապատասխան առաջարկություններ մինչև սեպտեմբեր նախատեսված այցի շրջանակներում «Լոռի-Մարտակերտ» համագործակցության ծրագրերի իրականացման բնագավառներում (մասնավորապես «Սմարթ» դասարանի ստեղծման, առողջապահական, սոցիալական և կրթական ոլորտներ):

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

«Հատուկ մանկավարժություն» մասնագիտության ներդրման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել և անհրաժեշտության դեպքում դրանք ներառել Լոռու մարզի զարգացման ռազմավարության ծրագրերում:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Լոռու մարզի համայնքների հետ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել քանու պատճառած վնասների սահմանված կարգով գույքագրելու ուղղությամբ և մեկօրյա ժամկետում ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ